ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

6 մայիսի 2019թ. թիվ 311-Ա

«ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ Ե.ՉԱՐԵՆՑԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 9
ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին ենթակետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010թ. մարտի 18-ի թիվ 113-Ն հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության «Պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման» կարգի 4, 7, 9, 11, 15 և 17 կետերը, հաշվի առնելով «ՀՀ Լոռու մարզի Ալավերդու Ե. Չարենցի անվան թիվ 9 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի մանկավարժական և ծնողական խորհուրդների նախագահների 01.04.2019թ. գրությունները և Ալավերդի համայնքի ղեկավարի 15.03.2019թ. թիվ 513 գրությունը՝

Ո ր ո շ ու մ եմ.

ՀՀ Լոռու մարզպետի 2016թ. մարտի 15-ի «Լոռու մարզի դպրոցների խորհուրդների կազմերը հաստատելու մասին» թիվ 75-Ա որոշման հավելվածի «ՀՀ Լոռու մարզի Ալավերդու Ե. Չարենցի անվան թիվ 9 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ մասում՝

1. «Իսրայելյան Աստղիկ» բառերը փոխարինել «Ղազարյան Թամարա» բառերով, «Գրիգորյան Քնարիկ» բառերը՝ «Ծատինյան Ջուլիետա» բառերով, «Մելիքսեթյան Կարինե» բառերը՝ «Սմբատյան Անահիտ» բառերով, «Ավետիսյան Հովիկ» բառերը՝ «Սահակյան Կարինե» բառերով և «Աբելյան Մերուժան» բառերը՝ «Շավինյան Սուսաննա» բառերով:

2. Վերահաստատել մանկավարժական խորհրդի կողմից առաջադրված Վիկա Գևորգյանի թեկնածությունը:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Invalid signature

X

ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆ

Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ

2019թ. մայիսի 6
ք.Վանաձոր